Կարգապահական գործ թիվ ԿԳ-16212

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի թիվ 47-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/32-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, **Խորհրդի անդամներ**՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Կարեն Մեժլումյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

17.03.2017թ-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 305) (այսուհետ նաև՝ Պատասխանող), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ՝ Դիմող)** կողմից (նախագահող դատավոր Ա. Խաչատրյան) 23.09.2016թ-ի գրությամբ Պալատ է ուղղվել Դիմողի կողմից նույն օրը կայացված «Դատական սանկցիա կիրառելու մասին որոշում» **(այսուհետ՝ Որոշում)**:

Որոշման համաձայն Դիմողի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 23.09.2016թ-ի դատական նիստի ժամանակ Պատասխանողը, հանդիսանալով գործով ամբաստանյալի պաշտպան, ըստ էության միջնորդություն է ներկայացրել տուժող Ն. Հարությունյանի վերջին հարցաքննության և դատաքննության ընթացքում տված ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ հարցաքննելու վերաբերյալ:

Դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացրել հետաձգել

պաշտպանի միջնորդությունը, մինչև գործում առկա ապացույցների հետազոտումն ավարտելը, որից հետո դատարանը կանդրադառնա ներկայացված միջնորդությանը՝ տուժող Ն. Հարությունյանին լրացուցիչ հարցաքննելու հարցին /քանի որ մյուս ապացույցները հետազոտելուց հետո տուժողին լրացուցիչ հարցեր ուղղելու անհրաժեշտություն ևս կարող է առաջանալ/:

Պատասխանողն առարկել է նախագահող դատավորի գործողությունների դեմ, նշելով, որ տուժողի հարցաքննությունը դեռևս չի ավարտվել և այն կավարտվի տուժողին հակասությունների շուրջ տրված հարցերն ավարտելուց հետո:

Դիմողը նշել է նաև, որ վերը նշված հարցի շուրջ դատարանի և պաշտպանի միջև ծագած բանավեճի ընթացքում Պատասխանողը հայտարարել է. «Առարկում եմ նախագահող դատավորի անօրինական գործողության դեմ, ընկալման խնդիր պաշտպանը չունի, ընկալման խնդիր առկա է նախագահողի մոտ, որ ասում է, որ լսեք դատարանի որոշումը: ... պետք չէ ընկալման մասին խոսել պաշտպանի հասցեին, ընկալման խնդիր ունի նախագահող դատավորը»:

Դիմողը պաշտպանի նման արտահայտությունները գնահատել է որպես վիրավորական, և գտել է, որ թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործի քննության ընթացքում պաշտպան Կրոմվել Գրիգորյանն իր իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն, խոչընդոտել է դատական նիստի բնական ընթացքին և անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, ինչի հիման վրա որոշել է Պատասխանողի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ վերջինիս պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատին:

Դիմումին կից ներկայացվել է նաև թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 23.09.2016թ-ի դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչը:

Սույն կարգապահական գործի նախապատրաստման փուլում Դիմողը բացատրություն չի ներկայացրել, ինչպես նաև չի ներկայացել սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

2016 թվականի հոկտեմբերի 21-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 439-Ա/ԿԳ-16212 որոշումը, համաձայն որի որոշվել է.

«1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 305) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-16212):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին (դատավոր Արմեն Խաչատրյան):

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

- կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.

- սույն որոշման օրինակն ուղարկել Դիմողին և փաստաբան Կրոմվել Գրիգորյանին՝ պարզաբանելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները»:

25.10.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Սամվել Միրզոյանին:

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Կրոմվել Գրիգորյանը **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** իր 01.12.2016թ. գրավոր բացատրությամբ հայտնել է, որ թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 23.09.2016թ-ի դատական նիստի ժամանակ, համաձայն դատարանի կողմից դեռևս 21.03.2106թ-ի դատական նիստերի ժամանակ բավարարված պաշտպանի միջնորդության՝ իր կողմից հրապարակվել են տուժողի նախաքննական ցուցմունքները, ինչից հետո նա ցանկություն է արտահայտել հարցեր ուղղել տուժողին: Դրան ի պատասխան, դատարանը հայտնել է, որ տուժողի հարցաքննությունն արդեն իսկ ավարտված է և իր միջնորդությունը դիտարկել է որպես «տուժողին լրացուցիչ հարցաքննելու մասին» միջնորդություն, և հետաձգել է դրա քննարկումը մինչև գործում առկա ապացույցների հետազոտումն ավարտելը:

Արդյունքում, իր և դատարանի միջև ծագել է իրավական բանավեճ, որի ժամանակ նրանք տարբեր տեսակետներ են հայտնել այն հարցի շուրջ, թե ըստ դատավարական կարգի երբ է ավարտված համարվում տուժողի հարցաքննությունը և երբ պետք է տուժողին հարցեր ուղղել իր նախաքննական և դատաքննական ցուցմունքների միջև առկա հակասությունների վերաբերյալ:

Ծագած բանավեճի ընթացքում, նախագահող դատավորը հայտարարել է, որ պաշտպանը սխալ է ընկալել դատարանի որոշումը, ինչին ի պատասխան Պատասխանողը հայնել է, որ նա ընկալման խնդիր չունի և տվյալ դեպքում ընկալման խնդիր առկա է նախագահողի մոտ:

Նշել է, որ նախագահող դատավորը հիմք չի ունեցել իր նկատմամբ դատական սանկցիա կիրառելու համար, քանի որ նա իր իրավունքներից օգտվել է բարեխղճորեն, դատավարական պարտականությունները կատարել է հարգալից և պատշաճ, կատարել է դատարանի բոլոր օրինական կարգադրությունները, դատական նիստի բնականոն ընթացքը չի խոչընդոտել կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն

կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի դրսևորել:

Վերոգրյալի հիման վրա գտել է, որ իր գործողություններում առկա չէ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտում:

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին Պատասխանողը ներկայացել է և տվել է նույնաբովանդակ բացատրություն:

4. **<u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>**

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Սամվել Միրզոյանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2016 թվականի դեկտեմբերի 20-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«(…) դատավոր-փաստաբան բանավեճը ուղղակի կապված է քրեական գործով դատավարական պահանջների հետ, որտեղ դատավարական գործողության իրականացման գործընթացի իրագործման փաստաբանի անմիջական պահանջի, սակայն դատարանի կողմից այն հետաձգելու որոշման միջև առաջացած կողմի՝ փաստաբան Կ. Գրիգորյանի ընկալման ունակության դատաքննության ժամանակ, դատարանի դահլիճում ներկա գտնվողների ու ամբաստանյալի ներկայությամբ հրապարակյավ հայտարարման նախաձեռնությունը դատարանինն է, իսկ փաստաբանի վերաբերմունքը կատարվածի ադեկվատ հետևությունն է, որն էլ, ըստ նախաձեռնողիս, հանգել է դատարանի կողմից բանավեճի ու պաշտպանի կողմից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի ընկալմանը, փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու որոշման կայացմանը»:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

22.12.2016թ. գործը հանձնվել է Խորհրդին: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի մարտի 17-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. **<u>Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող

ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները (ինչպես նախապատրաստողի ունեցած, այնպես էլ խորհրդի քննության ժամանակ ներկայացված), հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 23.09.2016թ-ի դատական նիստի ժամանակ Պատասխանողի և Դիմողի միջև տեղի է ունեցել բանավեճ այն իրական հարցի շուրջ, թե ըստ դատավարական կարգի երբ է ավարտված համարվում տուժողի հարցաքննությունը և երբ պետք է տուժողին հարցեր ուղղել իր նախաքննական և դատաքննական ցուցմունքների միջև առկա հակասությունների վերաբերյալ, ինչը հաստատվում է Դիմողի Որոշմամբ, Պատասխանողի բացատրությամբ և դատական նիստի ձայնագրառման կրիչով:
2. թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 23.09.2016թ-ի դատական նիստի ժամանակ փաստաբան Կրոմվել Գրիգորյանը դատարանի հասցեին որևէ վիրավորական արտահայտություն չի հնչեցրել, ինչը հաստատվում է Դիմողի Որոշմամբ, Պատասխանողի բացատրությամբ և դատական նիստի ձայնագրառման կրիչով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.03.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Կրոմվել Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 03.11.1997թ-ից: 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 14 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (ավարտված վարույթներ) և առկա են 4 ընթացիկ վարույթ:

Տեղեկանքին կից ներկայացված հավելվածի համաձայն՝ 14 ավարտված վարույթներից 11-ով վարույթները կարճվել են, երկուսով փաստաբանի նկատմամբ նշանակվել է տույժ, որն արդեն իսկ մարվել է, իսկ մեկով Պատախասնողը ենթարկվել է հիմնական տույժի՝ նկատողության, սակայն որոշումը դեռևս ուժի մեջ չի մտել, քանի որ բողոքարկվել է դատական կարգով:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ 21.10.2016 թվականին հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն. «Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է

ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ»:

Վերլուծելորվ վերը նշված կանոնի պահանջը, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե՝ արդյո՞ք Պատասխանողը դատական նիստի ժամանակ չի ենթարկվել դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով չի վերաբերվել դատավորին, որը դրսևորվել է իր իրավունքներից անբարեխղճորեն օգտվելով, դատական նիստի բնական ընթացքին խոչընդոտելով և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով:

Տվյալ դեպքում, Խորհուրդը հաստատված է համարել այն հանգամանքը, որ դատական նիստի ժամանակ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի և նախագահող դատավորի բանավեճը կրել է իրավական բնույթ, մասնավորապես, նրանց միջև տարաձայնություն է առաջացել այն հարցի շուրջ, թե ըստ դատավարական կարգի երբ է ավարտված համարվում տուժողի հարցաքննությունը և երբ պետք է տուժողին հարցեր ուղղել իր նախաքննական և դատաքննական ցուցմունքների միջև առկա հակասությունների վերաբերյալ:

Խորհուրդն արձանագրում է, որ դատական նիստի ժամանակ Պատասխանողը, օգտվելով իր դատավարական իրավունքներից, իր կարծիքն է արտահայտել նախագահող դատավորի կողմից կայացված որոշման վերաբերյալ, ինչպես նաև, կատարելով Կանոնագրքի 4.1 կետի պահանջը, անկաշկանդ և անվախ պաշտպանել է իր վստահորդի իրավունքները:

Խորհուրդը գտնում է, որ դատական նիստի ժամանակ Պատասխանողի կողմից հնչեցված «ընկալման խնդիր պաշտպանը չունի, ընկալման խնդիր առկա է նախագահողի մոտ» արտահայտությունը վիրավորական բնույթ չի կրել, այլ արտահայտել է պաշտպանի դիրքորոշումն այն մասին, որ նա ճիշտ է ընկալել դատարանի որոշումը: Ավելին, այդ արտահայտությունը հնչեցվել է ի պատասխան վերը նշված իրավական բանավեճի շուրջ նախագահող դատավորի կողմից արված նույնաբովանդակ արտահայտության, ուստի Խորհրդի մոտ տարակուսանք է առաջացնում Դիմողի այն դիրքորոշումը, որ նման արտահայտությունն ունի վիրավորական բնույթ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.6-րդ, 39.8-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 16.26 կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 28-րդ հոդվածի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16212 կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան